

## ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 259-Ա

25 օգոստոսի, 2020 թվական

### ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N°298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 14-ի N 1972-Ա, 2020 թվականի օգոստոսի 19-ի N 2028-Ա, N 2034-Ա, N 2040-Ա, N 2051-Ա, N 2059-Ա, N 2060-Ա, N 2074-Ա, N 2086-Ա, N 2089-Ա, N 2092-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի օգոստոսի 18-ին և 20-23-ն իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) «Առնադո» ՍՊԸ՝ ք. Երևան, Կոմիտաս 54 Վ.(մարզասրահ)
- 2) «Տարևիկ Բաբինյան» Ա/Ձ՝ Դիլիջան համայնք, Հաղարծին բնակավայր, Առաջին 38.
- 3) «Ալվինա Բեգինյան» Ա/Ձ՝ Ազատամուտ համայնք, Ա. Հակոբյան 1 1.
- 4) «Արկադյա Մնացականյան» Ա/Ձ՝ ք. Ջերմուկ, Ձախափնյակ Ազատամարտիկների 11:
- 5) «Սիթի» ՍՊԸ՝ ք. Երևան, Ջրվեժ, Բանավան 19.
- 6) «Ստալկեր» ՍՊԸ՝ ք. Երևան, Փափազյան 8.
- 7) «Ավազյան Գուրգեն» Ա/Ձ՝ ք. Վայք, Շահումյան 102.
- 8) «Մայիս Ներսիսյան» Ա/Ձ՝ ք. Վայք, Ջերմուկի խճ. 7/4.
- 9) «Պետրոսյան Անահիտ» Ա/Ձ՝ ք. Վայք, Ջերմուկի խճ. 32.8.
- 10) «Նազելի Ավազյան» Ա/Ձ՝ ք. Եղեգնաձոր, Միկոյան 3/04.
- 11) «Հայկանուշ Ասատրյան» Ա/Ձ՝ ք. Վայք, Ջերմուկի խճ. 9.52.

- 12) «Արթուր Հայրապետյան» Ա/Ձ՝ ք. Եղեգնաձոր, Միկոյան 2.
  - 13) «Ինջոյան Խաչիկ» Ա/Ձ՝ ք. Արտաշատ, Իսակովի 97.
  - 14) «Սոս Նազարյան» Ա/Ձ՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 12/01:
2. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) կողմից անձանց ընդունելությունը.
    - 1) «Հոթել Աղվերան» ՓԲԸ՝ գ. Արզական, Անտառային 1 (հյուրանոց և մարզասրահ).
    - 2) «Դրիմ Ռեսթ» ՍՊԸ՝ գ. Արզական, Անտառային 6 (հյուրանոց և մարզասրահ).
    - 3) «Աշոտ Աբրահամյան» Ա/Ձ՝ գ. Արզական, Անտառային.
    - 4) «ՄԳԵ Կավալեռ» ՍՊԸ՝ գ. Արզական, Բարեկամության 111/119.
    - 5) «Լիլիթ Կարախանյան» Ա/Ձ՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան 7/1.
  3. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
  4. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
  5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
  6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 25/08/20 18:35:42 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

**Տ. ԱՎԻՆՅԱՆ**